



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ԲՆԱԾԱԿՆԵՐՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ

*[Handwritten signature]*



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 16 » 08 2018թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 68

**Ձեռնարկողը՝**

**<<ԴԵՄԵՐ>> ՍՊԸ**

Գյուղ Արամուս, Տիգրանաձորի 122

**Գործունեությունը՝**

**Արամուսի բազալտների հանքավայրի Դեմեր տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Կտրայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿի տնօրենի ժ/պ՝



*[Handwritten signature]*

Ռ. Ոսկանյան

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

թիվ ԲՓ 68

«16» 08 2018թ.

**Արամուսի բազալտների հանքավայրի Դեմեր տեղամասի արդյունահանման  
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկշիռային**

|                           |  |
|---------------------------|--|
| Պատվիրատու՝               | <<Դեմեր>> ՍՊԸ  |
| Ներկայացված նյութեր՝      | Շրջակա միջավայրի վրա ազդեցության<br>գնահատման հաշվեկշիռային և կից փաստաթղթեր |
| Գործունեության կատեգորիա՝ | «Ա»  |
| Տեղադրման վայրը՝          | Կոտայքի մարզ, Արամուս համայնք  |

Արամուսի բազալտի հանքավայրի Դեմեր տեղամասը գտնվում է Կոտայքի մարզի Արամուս և Կամարիս գյուղերի միջակայքում, Աբովյան քաղաքից հարավ-արևելք, Արամուս գյուղից 750մ հարավ-արևելք:

Նախկինում Արամուսի բազալտների հանքավայրի Դեմեր տեղամասի հաշվեկշիռային պաշարներն առաջին անգամ հաստատվել բնապահպանության նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալության խորհրդի կողմից 30 հունիսի 2003թ. N15 որոշմամբ, ըստ C<sub>1</sub> կարգի 215.5հազ.մ<sup>3</sup> քանակով, որպես հումք երեսպատման բլոկների արտադրության համար: Բլոկների միջին ելքը ընդունված է 42%:

Արամուսի բազալտների հանքավայրի Դեմեր տեղամասի պաշարները վերագնահատվել են 2015թ. էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ՕՅՊԳ թիվ 10 եզրակացությամբ: Պաշարները 01.09.2015թ. դրությամբ վերահաստատվել են, ըստ A կարգի 154.85 հազ.մ<sup>3</sup> քանակով, երեսպատման բլոկների արտադրության համար, որպես հումք: Բլոկների միջին ելքը 23% է: Ելնելով վերոհիշյալից նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություններ վերահաստատված պաշարների և արտադրատեսակների ելքի մասով: Արամուսի բազալտների հանքավայրի Դեմեր տեղամասը շահագործվում է 2005թ-ից՝ 068 ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում: Նախագծման պահին մնացորդային մարվող պաշարները կազմում են 109800մ<sup>3</sup>: Տարեկան արտադրողականությունը՝ 3500մ<sup>3</sup> կորզվող պաշար:

Դեմեր տեղամասի բազալտներն իրենց որակական ցուցանիշներով լիովին համապատասխանում են «Բլոկներ բնական քարից երեսպատման իրերի արտադրության համար» 9479-98 ԳՈՍՏ-ի և «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» 100-95 ՅՍՏ-ի պահանջներին:

Օգտակար հանածոյի կազմաբանությունը և հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները թույլ են տալիս դրա մշակումը կատարել բաց լեռնային աշխատանքներով: Բազալտների միջին հզորությունը 9.43մ է, մակաբացման ապարները 3.27մ, այդ թվում 0.86մ բերվածքային ապարներ, 2.41մ հողմահարված բազալտներ: Բացահանքի վերջնական եզրագծում հատակի միջն ընդունված է 1480մ:





Բազալտների արդյունահանումը նախատեսվում է իրականացնել հորատասեպային եղանակով : Շահագործումից հետո բացահանքը կունենա հետևյալ պարամետրերը՝

- առավելագույն երկարությունը – 200մ,
- առավելագույն լայնությունը – 140մ,
- մշակման խորությունը – 23մ,
- օտարման մակերեսը – 2.4հա,
- շահագործման ժամկետը – 30 տարի:

Բազալտների արդյունահանման ժամանակ նախագծային կորուստները որոշվել են ըստ դրանց առաջացման աղբյուրների և լեռնատեխնիկական պայմանների (կապված են օգտակար հանածոյի եզրագծման բարդության աստիճանից), դրանք կազմում են 4830մ<sup>3</sup> կամ 4.4%: Շահագործողական կորուստները 0,5%, որոնք կանխորոշվել են ելնելով արդյունահանման տեխնոլոգիայից:

Շահագործմանը զուգընթաց իրականացվելու է 1497.5մ միշ ունեցող հորիզոնի բացում՝ լեռնային աշխատանքների հետագա կազմակերպման համար:

Մակաբացման ապարների հեռացումը կատարվում է բուլդոզեր-էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնատրասպորտային համալիրի օգնությամբ: Բերվածքային ապարները տեղափոխվում են ներքին և ժամանակավոր ձևավորվող արտաքին լցակույտեր: Յոզմնահարված բազալտները տեղափոխվում են վերամշակման արտադրամաս:

1485մ միշ ունեցող աստիճանի մշակումից հետո մակաբացման աշխատանքներ չեն նախատեսվում:

Ելնելով հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից, հանքաշերտի մշակման ժամանակ ընդունվում է ընդլայնական, միակողմանի, խորացող մշակման համակարգ՝ մակաբացման ապարները /բերվածքային ապարներ/ արտաքին ժամանակավոր լցակույտ տեղափոխմամբ:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են՝

- Աշխատանքային աստիճանի բարձրությունը – մինչև 2,5 մ,
- Աշխատանքային աստիճանի թեքությունը – 90°,
- Մարված մակաբացման աստիճանի թեքությունը – 45°,
- Աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը – 20մ,
- Մարված 2 աստիճանների մեջ թողնվում է 1մ լայնությամբ բերմա:

Բլոկների բարձունը ավտոտրանսպորտի մեջ կատարվում է 16տ բեռնատարողությամբ KC-4571 մակնիշի ավտոկռունկի միջոցով:

Բլոկների արդյունահանման ժամանակ առաջացած թափոնները տարեկան 2345մ<sup>3</sup> ծավալով, Ժ3-170.01 մակնիշի բուլդոզերով տեղափոխվելու և կուտակվելու են հանքախորշից 10-15մ հեռավորության վրա, այնուհետև կուտակված թափոնները ՄԿ-4321 մակնիշի միաշերտի էքսկավատորով բարձրվելու են ԿԲԱ3-256Ե մակնիշի ավտոինքնաթափի մեջ և տեղափոխվելու է 0.5կմ հեռավորության վրա գտնվող ջարդիչ տեսակավորող կայանք՝ բազալտե խճի արտադրության համար: Կայանք են տեղափոխվելու նաև «փուշտա» շերտի ապարները՝ 4.36մ<sup>3</sup>/հերթ ծավալով:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվելու է բացահանքի արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև փոշենստեցման նպատակով՝ աշխատանքային հրապարակների, ավտոճանապարհների և լցակույտի մակերևույթի ջրման համար:

Խմելու ջուրը բերվելու է ԼԼԲ1.2 մակնիշի կցովի ջրի ցիստեռնով մոտակա գյուղից: Տեխնիկական ջուրը մատակարարվելու է ԿՕ-002 մակնիշի ջրցան լվացող ավտոմեքենայով՝ Կոտայքի ոռոգման համակարգից:

Ըստ հանքավայրի հիդրոերկրաբանական տվյալների, գետնաջրերը տարածքում բացակայում են: Բացի դրանից բացահանքերի աստիճանները ունեն ելք երկրի մակերևույթ հետևաբար, բացահանքի շահագործման ընթացքում մթնոլորտային տեղումների մի մասը հեռանում է ինքնահոս, իսկ մյուս մասն էլ ներծծվում է բացահանքի հատակի բազալտների ճաքերի միջով:



Բացահանքի լցակույտ առաջացնող ապարները, ընդամենը 12150մ<sup>3</sup> ծավալով, ներկայացված են բերվածքային ապարներով, որոնք շահագործման առաջին վեց տարիներին տեղափոխվում են արդեն մշակված տարածք և ձևավորվում է ներքին լցակույտ: 1482.5մ միշ ունեցող հորիզոնի շահագործմանն զուգընթաց արդյունահանվող բերվածքային ապարները տեղափոխվում են ներբացահանքային տարածք և հարթեցվում: Արտաքին լցակույտի միջին բարձրությունը կազմում է 3մ, օտարման մակերեսը 0.5հա:

Վերակուլտիվացվող տարածքը կազմում է 2.6հա: Շահագործման աշխատանքների ավարտից հետո կատարվում է ներքին լցակույտի մակերևույթի հարթեցում: Ռեկուլտիվացիայի իրականացման համար անհրաժեշտ ծախսը կկազմի 2751.95հազ. դրամ:

Հանքավայրի մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Բացահանքի տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն արձանագրվել, հանքավայրի շրջանում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն:

Ըստ նախագծային փաստաթղթերի նախատեսվում է շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները.

- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում, որին տրվում է համապատասխան թեքություն՝ թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը ապահովելու նպատակով:

- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:

- Փոշեմստեցման նպատակով ճանապարհներին նախատեսվում է ջրցանում տարվա չոր և շոգ օրերին:

- Մեքենաների աշխատանքի ժամանակ՝ սարքավորումների վրա վտանգավոր նյութերի չեզոքացուցիչների տեղադրում՝ վնասակար նյութերի արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով: Մեխանիզմի աշխատանքի ժամանակ վառելիքի և քսայուղերի արտահոսքի վերահսկում և կանխում:

- Օգտագործվող ագրեգատների և սարքավորումների սարքին վիճակում աշխատեցում՝ վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու նպատակով:

- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն:

- Սոցիալական ազդեցություններին ուղղված միջոցառումներ:

- Խախտված տարածքի ռեկուլտիվացիա:

Տեղամասի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումներ:

- Մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ:

- Արտադրական հրապարակի տարածքը նավթամթերքների աղտոտումից զերծ պահելու նպատակով տարին մեկ անգամ հողերի աղտոտվածության մշտադիտարկում:

Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

#### ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Կոտայքի մարզի Արամուս համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են բնապահպանության նախարարության





ստորաբաժանումները: Առկա է <<Արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության>> փորձաքննական դրական եզրակացություն:

**Փորձաքննական պահանջներ**

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:
2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:
3. Գործունեության իրականացման արդյունքում առաջացած թափոնների (օգտագործված յուղեր, քսայուղեր, հնամաշ դետալներ և այլն) կառավարումն ու շինարարության ավարտից հետո առաջացած շինադրի (կենցաղային աղբի) հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

<<Դեմեր>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արամուսի բազալտների հանքավայրի Դեմեր տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Ա. Դռնոյան

Մասնագետ՝

Ձ. Զուռնայան

